

հանճարով ու ճարտարութեամբ հանդիսանալու։ Ափսոս որ կը պակսին մեզ պատմական ամբողջ վաւերականք. որով կը բռնադատուինք ցրիւ աստի անտի հաւաքուած յիշատակարաններով գոհ ըլլալ։ Այսպիսի գրուած մը ձեռուրնիս անցաւ, գրեթէ հարիւր տարի յառաջ գրուած ի նոր Նախիջեւան, յորմէ կը տեղեկանամք թէ մինչև անցեալ դարուն վերջերը դեռ կանգուն մնացած էին ի Կաֆա քսանըչորս եկեղեցիք, զորս յանուանէ կը յիշատակէ գրիչն։ Մէջ բերենք այդ իրաւամբ հետաքննական ցուցակը.

« Քէֆէ, կ'ասեն, մեծ քաղաք է.

Թագաւորաց հաստատած է.

Քսանուչորս եկեղեցի է.

Քարերն ամէն սըրբատաշ է:

Քէֆէ քաղաք ծովահայեաց,

Եկեղեցիքըն զարգարած:

— Սուրբ Աննա բարձրը տեղ է,

Ատոռածածիկն անոր քովն է

Վարդապետաց օթարան է.

Հանարձոռնն անկից վար է.

Սուրբ Թորոս բերդէն դուրս է.

Սուրբ Գեորգ ամենահաս է.

Հրեշտակապետ բերդէն ներս է.

Ամենեցուն բարեխօս է:

Սուրբ Նիկողոս սարի վրայ է.

Սուրբ Ակոբ հայրապետ է.

Սուրբ Խաչն անկից վեր է,

Քրիստոնէից մեծ նըչան է:

Սուրբ Սարգիս յոյժ մեծ ժամ է.

Մարտիրոս որդւովըն զինուոր է.